ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Մեդալը բաղկացած է 2 մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացած երկկողմ պատկերով սկավառակից: Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24, որը երեսպատված է 24 միլիմետր լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով, որի եզրերով երկու կողմից անցնում են սպիտակ՝ 1 միլիմետր լայնությամբ և 5 միլիմետր լայնությամբ զոլակներ: Մեդալը արտադրվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և պատվում է 999 հարգի ոսկով: Մեդալի հաստությունը՝ մոտավորապես 4 միլիմետր (± 10% շեղում): Մեդալն իրենից ներկայացնում է 42 միլիմետր երկարությամբ դեպի եզրերը լայնացող հավասարակողմ խաչ, որի կենտրոնում առկա է 30 միլիմետր տրամագծով սկավառակ: Խաչը չորս անկյուններից զարդարված է շրջանաձև՝ դափնու ճյուղերով, որոնց տրամագիծը 39.5 միլիմետր է: Խաչի թևերը պատված են մուգ կապույտ էմալով, որոնք իրենց հերթին եզերված են սպիտակ էմալով: Խաչի թևերի լայնությունը 14.6 միլիմետր է: Սկավառակի կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային լոգոն՝ պատված սպիտակ էմալով: Լոգոն եզերված է շրջանով, որը պատված է Հայաստանի Հանրապետության եռագույնի՝ կարմիր, կապույտ,նարնջագույն էմալներով: Սկավառակը ներքևի հատվածում զարդարված է կիսալուսնաձև՝ կենտրոնից դեպի աջ և ձախ կողմերը ձգվող ռելիեֆային ցորենի հասկերով: Սկավառակի վերևի եզրաշերտին զուգահեռ առկա Է «ԽԻՉԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» կորաձև, ռելիեֆային ուռուցիկ գրառումը: Մեդալի դարձերեսին՝ ներքևի հատվածում, դաջված է Մեդալի եռանիշ հերթական համարը: Վաճառողը Գնորդին պետք է ներկայացնի փորձաքննության եզրակացություն մատակարարվող մեդալների տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: Մեդալի հետ

	հանձնվում է նաև իր տուփը: Տուփ՝ չափերը՝ 120x100մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում կրծքանշանի չափերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ քննչական կոմիտեի լոգոտիպի 50 մմ տրամաչափով UV տպագրություն: Տուփի գույնը մուգ կապույտ: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	